

## ՏԵՂԵԿԱՆՔ

Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագրի կատարման արդյունքների մասին (2011թ. 1-ին կիսամյակ)

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացված են իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին նախագծեր</li> <li>- ոլորտի 50 իրավական ակտեր վերանայվել են</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- ոլորտի 50 իրավական ակտեր վերանայվել են</li> </ul>	<p>Հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացնելու նպատակով վերանայվել են 14 իրավական ակտեր՝ մասնավորապես, հանրակրթության ոլորտում՝ 4, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 5, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում՝ 5: Ներկայացված իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ամփոփումը կիրականացվի 2011թ. 2-րդ կիսամյակում:</p>
2. Ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների գործընթացի վերանայում		<ul style="list-style-type: none"> <li>- կազմված են գրավոր և բանավոր քննությունների փորձարկված հարցերի բանկեր՝ յուրաքանչյուր առարկայի գծով գրավոր քննության 5000 հարց, բանավոր քննության 1000 հարց, որոնք ներառում են ուսումնական ծրագիրն ամբողջ ծավալով</li> <li>- հրապարակված են հարցերը՝ պատասխաններով</li> <li>- 2014 թվականի համար հաստատված է բուհական ընդունելության նոր հայեցակարգ, ներառյալ հայերենի պարտադիր քննություն, ինչպես նաև արժանահավատ և ստանդարտացված թեստեր՝ համաշխարհային ճանաչում ունեցող թեստերի օրինակով (SAT, GRE, լեզուների ստանդարտացված թեստեր և այլն)</li> </ul>	<p>Շրջաբերականներ են ուղարկվել ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, բոլոր ավագ դպրոցներին՝ քննական յուրաքանչյուր առարկայի համար թեստերի շտեմարան ստեղծելու, ներկայումս գործող թեստերը լրամշակելու և բարելավելու նպատակով, մինչև 2011թ. սեպտեմբերի 1-ը ՀՀ ԿԳ նախարարության ներկայացնել ուսուցիչների կողմից մշակված՝ ավարտական և միասնական քննությունների թեստերի նմուշներ /Ա և Բ մակարդակներով/:</p>
3. Բուհերի ֆինանսավորման ծավալների ավելացում	<ul style="list-style-type: none"> <li>- հաստատված է բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը</li> <li>- մշակված և հաստատված է ուսանողական վարկերի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- ներդրված են կրթաթոշակներ, նպաստներ՝ համակցված ուսանողի առաջադիմության, կարիքավորության և տնտեսության զարգացման առաջնային ոլորտների պահանջարկի և այլ գործոններով</li> </ul>	<p>ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 25 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումը ապահովող միջոցառումների ժամանակացույցը:</p>

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
	<p>ռազմավարությունը և փորձնական ծրագիրը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ընդլայնված են ուսանողի աջակցման ծառայությունները, մասնավորապես՝ ուսանողական վարկեր, վարձավճարների զեղչման, վճարների հետաձգման մեխանիզմների կիրառում</li> <li>- սահմանված է ըստ մասնագիտությունների վարձավճարների չափի որոշման մեթոդաբանությունը</li> <li>- ներդրված է բուհերի կապիտալ ծախսերի և զարգացման ծրագրերի ֆինանսավորում</li> <li>- ավելացված են բուհերի ֆինանսավորման ծավալները</li> </ul>	
4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների ավելացում	<ul style="list-style-type: none"> <li>- ներդրված է «Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման» կարգը, որը կսահմանի գործունեության որակական ցուցանիշներից կախված զարգացման ֆինանսավորման նոր մեխանիզմ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- սահմանված է ֆինանսավորման նոր բանաձև, որը տարբերակում է ֆինանսավորումն ըստ կրթական աստիճանների</li> </ul>	<p>«Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2011 թվականի հունիսի 8-ի թիվ 01/11.1/6082-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն:</p> <p>Փորձագիտական եզրակացություն ստանալուց հետո այն սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարություն:</p>
5. Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում	<ul style="list-style-type: none"> <li>- կանոնակարգված է միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտների տեսչավորման օրենսդրական դաշտը</li> <li>- փոփոխված է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- տեսչավորված են ՄՄՈՒՀ-ների 50%-ը</li> <li>- տեսչավորված են բուհերի 50%-ը</li> </ul>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարին են ներկայացվել «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքում և տեսչության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդից, Երևանի քաղաքապետարանից, ՀՀ ֆինանսների, տարածքային կառավարման և արդարադատության նախարարություններից ստացված կարծիքների քննարկման արդյունքում նախագծերի նոր՝ փոփոխված տարբերակները, որտեղ ներառվել են միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնավորումները:</p>

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակում	<ul style="list-style-type: none"> <li>- բուհերի կառավարման խորհուրդների կողմից հաստատված է միջոցառումների ծրագիրը</li> <li>- բուհերի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները</li> </ul>		<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության 25.01.2011թ. թիվ 01/06/615-11 գրությամբ ՀՀ պետական բուհերին տրված հանձնարարականի համաձայն՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվել են Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թթ. միջոցառումների համալիր ծրագրերը, որոնք երաշխավորվել են բուհերի գիտական խորհուրդների կողմից և հաստատվել են բուհերի կառավարման խորհուրդների կողմից: Որոշ բուհերում դրանք դեռ չեն հաստատվել բուհերի կառավարման խորհուրդների կողմից /դեռևս խորհուրդների նիստեր չգումարավելու պատճառով/: Նախատեսվում է դրանք հաստատել առաջիկա նիստերի ժամանակ:</p> <p>Բուհերի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները</p> <p>Բուհերի հակակոռուպցիոն ծրագրերը ներկայացվել են հանրային ռադիոյի «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» հաղորդաշարով:</p> <p>Կազմակերպվել է «Բուհերում թափանցիկության և արդարության խթանում» խորագրով խորհրդաժողով, որին մասնակցել են նաև 4 երկրներից հրավիրված փորձագետներ:</p>
7. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների վերականգնման և հեռացման գործընթացներում	<ul style="list-style-type: none"> <li>- մշակված և հաստատված է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների վերականգնման և հեռացման» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգը</li> </ul>		<p>Մշակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման» կարգի նախագիծը , առաջիկայում կներկայացվի ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգը մշակվել է և գտնվում է քննարկման փուլում:</p>

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
8. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների շարժունության ապահովման գործընթացում	<ul style="list-style-type: none"> <li>- մշակված և հաստատված է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շարժունության» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ մեկ ուսումնական հաստատությունից այլ հաստատություն տեղափոխման» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական մեկից ավելի կրթություն ստանալու» կարգը</li> </ul>		<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 12-ի «Ուսանողների /ուկնդիրների/ մեկ ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1455-Ն հրաման /պետական գրանցում 17.01.11թ. կողմ 11011013/:</p> <p>Կարգը տեղակայված է ՀՀ կրթության և գիտության նախարարության <a href="http://www.edu.am">www.edu.am</a> պաշտոնական կայքի «Մասնագիտական կրթություն» բաժնում:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մարտի 12-ի «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրաման: Կարգը տեղակայված է ՀՀ կրթության և գիտության նախարարության <a href="http://www.edu.am">www.edu.am</a> պաշտոնական կայքի «Մասնագիտական կրթություն» բաժնում:</p>
9. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի և կանոնների վերանայում	<ul style="list-style-type: none"> <li>- վերացված են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունները</li> </ul>		<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2011 թվականի ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 237-Ն հրաման: Կարգը տեղակայված է ՀՀ կրթության և գիտության նախարարության <a href="http://www.edu.am">www.edu.am</a> պաշտոնական կայքի «Մասնագիտական կրթություն» բաժնում:</p>
10. Ապահովել ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը	<ul style="list-style-type: none"> <li>- ապահովված է գնումների պատվերների հարապարակայնությունը</li> <li>- հրապարակված են գնումների արդյունքները</li> </ul>		<p>Ուսումնական հաստատությունները իրենց գնումներն իրականացրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գնման գործընթացների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական կայքում:</p> <p>Ուսումնական հաստատությունների կողմից կատարված գնումների արդյունքները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական կայքում:</p>
11. ՀՀ մարզերի ուսումնական հաստատությունների գործունեության	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ-ում ստեղծվել են Կրթության պետական տեսչության տարածքային 3 մարմիններ</li> </ul>		<p>ՀՀ կրթության և գիտության նախարարին է ներկայացվել ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության</p>

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
Նկատմամբ անմիջական վերահսկողության, օպերատիվության, արագ արձագանքման ապահովում			պետական տեսչություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 1927-Ն որոշման հավելվածի փոփոխության նոր նախագիծը, որում ներառվել են ՀՀ ֆինանսների և տարածքային կառավարման նախարարությունների կողմից ստացված դիտողություններն ու առաջարկները: Համաձայն նոր նախագծի՝ ՀՀ Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում ՀՀ կրթության պետական տեսչությունը կստեղծի տարածքային չորս մարմիններ:
12. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ կրթության ոլորտի խախտումների տեսչավորման մեխանիզմների սահմանում	- վարչական տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների		2011թ. 1-ին եռամսյակում ՀՀ կառավարություն ներկայացված՝ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ նոր օրենսգրքում ՀՀ կրթության պետական տեսչությանը՝ ըստ կրթական մակարդակների, ուսումնական հաստատությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու լիազորություն վերապահելու մասին առաջարկությունը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:
13. Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում	<ul style="list-style-type: none"> <li>- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը</li> <li>- գործում է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական նոր կայքը, որում գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ</li> <li>- ԶԼՄ-ներով հրապարակվել են ուսումնառության տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործընթացում շահառուների համար հնարավոր առկա ռիսկերի վերաբերյալ պարզաբանումները</li> <li>- լուսաբանվել են ուսանողների շրջանում իրականացված</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը</li> <li>- գործում է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական նոր կայքը, որում գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ</li> <li>- ԶԼՄ-ներով հրապարակվել են ուսումնառության տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործընթացում շահառուների համար հնարավոր առկա ռիսկերի վերաբերյալ պարզաբանումները</li> <li>- հրապարակված են կրթության ոլորտում իրականացվող մրցույթների գնահատման չափանիշները և արդյունքները</li> <li>- լուսաբանվել են ուսանողների շրջանում</li> </ul>	Պատրաստվել և Հանրային ռադիոյով հեռարձակվել է նոր հաղորդաշար «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի»: Հեռարձակվել է 15 հաղորդում, որոնց ընթացքում ներկայացվել են կոռուպցիայի դեմ պայքարի ինչպես միջազգային փորձը, այնպես էլ բուհերում հաստատված ծրագրերով նախատեսված միջոցառումների ընթացքն ու փուլային արդյունքները: Հանրային ռադիոյով շուրջ 100 անգամ հեռարձակվել է հակակոռուպցիոն ուղղվածության ռադիոգովազդ: Նախապատրաստական փուլում է հեռուստագովազդի պատրաստման աշխատանքները: ՀՀ ԿԳ նախարարության գործող պաշտոնական կայքում և կրթական պորտալում բացվել են «Հանրային քննարկում» բաժինները, որոնք հնարավորություն են տալիս հանրությանը մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին՝ ապահովելով մասնակցություն և թափանցիկություն/22 իրավական ակտերի նախագծեր/:

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը		Միջոցառումների կատարման արդյունքները
	2011թ.	2012թ.	
	ուսումնասիրությունների արդյունքները	իրականացված ուսումնասիրությունների արդյունքները	
14. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում	<ul style="list-style-type: none"> <li>- հեռարձակվել են սոցիալական հոլովակներ</li> <li>- հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- հեռարձակվել են սոցիալական հոլովակներ</li> <li>- հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները</li> </ul>	Պատրաստվել են «Ես սիրում եմ իմ դպրոցը» անիմացիոն հեռուստագովազդներ/8 հոլովակ/, որոնք հեռարձակվում են Հայաստանի հանրային և այլ հեռուստաընկերությունների եթերներով: ՀՀ ԿԳ նախարարության կողմից հանրային խրախուսանքի են արժանացել հանրապետական, և միջազգային օլիմպիադաների մասնակիցները և հաղթողները:
15. Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգ	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացված են անկախ վերահսկողության քաղաքացիական հասարակության ինտիտուտների կողմից հաշվետվություններ, վերլուծություններ, առաջարկություններ</li> </ul>		
16. Նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացում	<ul style="list-style-type: none"> <li>- հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության հաղորդակցման ռազմավարությունը</li> <li>- հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագիրը</li> </ul>		Մշակվել և հաստատվել է «ՀՀ ԿԳ նախարարության 2011-2015թթ հաղորդակցման ռազմավարությունը»: